ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ

17 մարտի 2016 թվականի **թիվ 20** քաղ. Մոսկվա

«Եվրասիական տնտեսական միության եւ դրա անդամ պետությունների կողմից Սերբիայի Հանրապետության հետ առեւտրային ռեժիմի միասնականացման վերաբերյալ Սերբիայի Հանրապետության հետ բանակցություններ սկսելու մասին» Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի որոշման նախագծի վերաբերյալ

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհուրդը **որոշեց**.

1. Հավանություն տալ «Եվրասիական տնտեսական միության եւ դրա անդամ պետությունների կողմից Սերբիայի Հանրապետության հետ առեւտրային ռեժիմի միասնականացման վերաբերյալ Սերբիայի Հանրապետության հետ բանակցություններ սկսելու մասին» Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի որոշման նախագծին (կցվում է) եւ այն ներկայացնել Եվրասիական

տնտեսական բարձրագույն խորհրդի քննարկմանը:

2. Սույն Որոշումն ուժի մեջ է մտնում դրա պաշտոնական հրապարակման օրվանից 10 օրացուցային օրը լրանալուց հետո:

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի անդամներ՝

Հայաստանի Հանրապետությունից՝	**Բելառուսի Հանրապետությունից՝**	**Ղազախստանի Հանրապետությունից՝**	**Ղրղզստանի Հանրապետությունից՝**	**Ռուսաստանի Դաշնությունից՝**
Վ. Գաբրիելյան	**Վ. Մատյուշեւսկի**	**Բ. Սագինտաեւ**	**Օ. Պանկրատով**	**Ի. Շուվալով**

ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ

« » -ի 20 թվականի թիվ քաղ.

Եվրասիական տնտեսական միության եւ դրա անդամ պետությունների կողմից Սերբիայի Հանրապետության հետ առեւտրային ռեժիմի միասնականացման վերաբերյալ Սերբիայի Հանրապետության հետ բանակցություններ սկսելու մասին

«Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի 7-րդ եւ 102-րդ հոդվածների հիման վրա՝ Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհուրդը **որոշեց.**

1. Եվրասիական տնտեսական միության անդամ պետություններին՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի հետ համատեղ սկսել բանակցություններ՝ Եվրասիական տնտեսական միության եւ դրա անդամ պետությունների կողմից Սերբիայի Հանրապետության հետ առեւտրային ռեժիմի միասնականացման վերաբերյալ ՝ մի կողմից՝ Եվրասիական տնտեսական միության եւ դրա անդամ պետությունների, մյուս կողմից՝ Սերբիայի Հանրապետության միջեւ ազատ առեւտրի գոտու մասին համաձայնագիր կնքելու միջոցով:

2. Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդին՝ հաստատել սույն Որոշման 1-ին կետում նշված բանակցությունների հրահանգները:

3. Սույն Որոշումն ուժի մեջ է մտնում դրա ընդունման օրվանից:

Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի անդամներ՝

Հայաստանի Հանրապետությունից՝	**Բելառուսի Հանրապետությունից՝**	**Ղազախստանի Հանրապետությունից՝**	**Ղրղզստանի Հանրապետությունից՝**	**Ռուսաստանի Դաշնությունից՝**